1.V
15.V
1.VI
15.VI
15.VI-ից հետո
ԱՆՑՈՒՄ 5°-ԻՑ
ԱՆՑՈՒՄ 10°-ԻՑ
Օրական միջին ջերմաստիճանի 10°-ից անցնելու ժամկետները
մինչև 1.IV
1.IV
15.IV
1.V
15.V
1.VI
15.VI
1.VII
15.VII
15.VII-ից հետո
Օդի 15°-ից բարձր միջին ջերմաստիճան ունեցող օրերի թիվը տարվա ընթացքում
15°-ից բարձր ջերմաստիճան ունեցող օրերի թիվը
0 30 60 90 120 150 180 ավելի
Ջոնա, որտեղ 15°-ից բարձր օրական միջին ջերմաստիճան չի նկատվում
Մասշտաբ 1:1 500 000
կմ 15 0 15 30 45 60 75 կմ

ԲՈԼՈՐ ՏԻՊԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԱՇՏՈՎ ԵՎ ԽՈՐՇԱԿՆԵՐՈՎ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Օրերի թիվը
մինչև 20 40 60 80 100 ավելի
Ինտենսիվ երաշտով և խորշակներով օրերի թիվը

Բոլոր տիպի երաշտով ու խորշակներով օրերի թվի տարեկան ընթացքը
Օրերի թիվ
Ամիսներ
Երևան
Սիսիան
Մեղրի
Գորիս
Սևան

ՄԻՋԻՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԱՇՏՈՎ ԵՎ ԽՈՐՇԱԿՆԵՐՈՎ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Օրերի թիվը
մինչև 10 20 30 40 50
Շատ ինտենսիվ երաշտի և խորշակների ենթակա շրջաններ (10-15 տարին մեկ անգամ)

ՕԴԻ ՕՐԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ 0°-ԻՑ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ

Անցման ժամկետները
մինչև 1.II 1.II 20.II 10.III 1.IV 20.IV 10.V 10.V-ից հետո

ՏԱՔ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ ՕԴԻ 0°-ԻՑ ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

Ջերմաստիճանների գումարը ըստ C
մինչև 1000 2000 2500 3000 4000 4500 5000 ավելի

Մասշտաբ 1:2 000 000
կմ 20 0 20 40 60 80 100 կմ

Օդի 5°-ից բարձր օրական միջին ջերմաստիճանների գումարի աճը



Ջերմաստիճանների գումարը (ըստ C)



5°–ԻՑ ԲԱՐՁՐ

10°–ԻՑ ԲԱՐՁՐ

Օդի 10°-ից բարձր օրական միջին ջերմաստիճանների գումարի աճը



Ջերմաստիճանների գումարը (ըստ C)



Մասշտաբ 1:1 500 000





ԱԳՐՈԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶՈՆԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

№№ ը.կ.	Զոնաները	Վերին սահմանը մ-ով	10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը	Հիդրոթերմիկ գործակիցը (ՀԹԳ) *	Երկրագործության բնույթը	Հիմնական գյուղատնտեսական կուլտուրաները
1	Չոր մերձարևադարձային	մինչև 800–1000	4000–4500	0,3–0,5	Բացառապես ոռոգովի	Խաղող, դեղձ, ծիրան, նուռ, թուզ, արևելյան խուրմա, նուշ, ջերմասեր բանջարա-բոստանային կուլտուրաներ
2	Չոր խիստ-ցամաքային	մինչև 900–1000	4000	0,3–0,5	Բացառապես ոռոգովի	Խաղող (վազերը ձմռանը թաղվում են), դեղձ, ծիրան, բամբակենի, ջերմասեր բանջարա-բոստանային կուլտուրաներ
3	Չոր ցամաքային	մինչև 1300	3500–4000	0,5–0,8	Ոռոգովի	Խաղող (վազերը ձմռանը թաղվում են), դեղձ, ծիրան, ծխախոտ
4	Չափավոր-շոգ չոր	մինչև 1600	2500–3500	0,6–0,9	Ոռոգովի, մի շարք կուլտուրաներ՝ անջրդի	Խաղող, ծխախոտ, ծիրան, հնդավոր պտղատուներ, հացահատիկ
5	Չափավոր-շոգ անբավարար խոնավությամբ	մինչև 800–900	3000–3500	1,0–1,2	Գերազանցապես անջրդի	Խաղող, դեղձ, ծիրան, ծխախոտ, եգիպտացորեն
6	Չափավոր-տաք խոնավ	մինչև 1400	2500–3000	1,3–1,5	Անջրդի	Ծխախոտ, հացահատիկ, եգիպտացորեն, կարտոֆիլ, հնդավոր պտղատուներ, բալ, կեռաս
7	Չափավոր-խոնավ (անտառային շրջանների)	մինչև 2000	2000–2500	1.5–1,8	Անջրդի	Ծխախոտ, հացահատիկ, եգիպտացորեն կարտոֆիլ, հնդավոր պտղատուներ
8	Չափավոր-ցուրտ անբավարար խոնավությամբ	մինչև 2000	2000–2500	0,9–1.2	Գերազանցապես անջրդի, ոռոգման կարիք է զգացվում	Հացահատիկ, կարտոֆիլ, ծխախոտ, հնդավոր պտղատուներ
9	Չափավոր-ցուրտ խոնավ	մինչև 2000	1800–2100	1,6–2,0	Անջրդի	Հացահատիկ, կարտոֆիլ, ծխախոտ, հնդավոր պտղատուներ
10	Ջով	մինչև 2500	1300–1500	1,0–1,5	Անջրդի	Հացահատիկ, կարտոֆիլ
11	Ցուրտ	2500-ից բարձր	500-ից պակաս		Երկրագործությունն անհնարին է, օգտագործվում է իբրև արոտավայր	

* Հիդրոթերմիկ գործակիցը հավասար է 10°-ից բարձր ջերմաստիճան ունեցող ժամանակամիջոցի տեղումների գումարին բաժանած այդ նույն ժամանակամիջոցի ջերմաստիճանների 10 անգամ նվազեցրած գումարի վրա $\left(ՀԹԳ = \frac{\text{տեղումների } \Sigma}{\Sigma\, t > 10^\circ \cdot 10}\right)$

ՋՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ գետերը, լճերն ու աղբյուրները բացառիկ կարևոր դեր են խաղում ռեսպուբլիկայի կյանքում՝ իբրև ջրային էներգիայի, ոռոգման և ջրամատակարարման աղբյուրներ:

Ռեսպուբլիկայի գետային ցանցը բավականին խիտ է: Այստեղ կան 10 կմ և ավելի երկարություն ունեցող 200-ից ավելի գետ ու գետակ, որոնք պատկանում են Արաքսի և Կուրի ավազաններին, ընդորում Արաքսի ավազանին պատկանում է ռեսպուբլիկայի տերիտորիայի 73,5, իսկ Կուրի ավազանին 26,5 տոկոսը: Ինչպես երևում է ջրագրական քարտեզից, գետային ցանցն ամենից խիտ է բարձր լեռնային շրջաններում և հասնում է նվազագույնի՝ ցածրադիր վայրերում: Կան նաև ժամանակավոր ջրհոսքեր, որոնք գործում են միայն տեղատարափ անձրևներից ու ձնհալքից առաջացած վարարումների ժամանակ:

Հայկական ՍՍՌ լեռնային շրջաններում գետերը սովորաբար ունեն մեծ քայքայիչ ուժ և հոսում են խոր ձորերով ու նեղ կիրճերով, որոնք տեղ-տեղ փոխարկվում են համեմատաբար լայն հովիտների:

Ջերմաստիճանի և տեղումների վգալի տարբերություններն ըստ տարվա եղանակների և տեղի բարձրության՝ պատճառ են հանդիսանում գետերի տարեկան հոսքի անհամաչափությանը: Գարնանային ձնհալքը տարբեր գոտիներում տեղի է ունենում ոչ միաժամանակ, որի պատճառով վարարման տևողությունը երկարաձգվում է:

Գետերի մեծ մասի առավելագույն հորդացումը տեղի է ունենում մայիս ամսին, մակարդակի երկրորդ բարձրացումը՝ սեպտեմբեր-հոկտեմբերին, նվազագույն մակարդակը դիտվում է ամռանը և ձմռանը:

Ռեսպուբլիկայի ամենաջրառատ գետը պետական սահմանով հոսող Արաքսն է, որն աշխարհի ամենապղտոր գետերի թվին է պատկանում: Նրա ձախափնյա վտակներից կարևոր են Ախուրյանը, Սևջուրը, Հրազդանը, Ազատը, Վեդին, Արփան, Մեղրին, Ողջին և Որոտանը: Կուրի վտակներից խոշորներն են Դեբեդն ու Աղստեվը: Սևանա լճի ավազանին են պատկանում մոտ 28 գետ և գետակ, որոնցից առավել խոշորներն են Մասրիկը, Արգիճին, Գավառագետը, Ձկնագետը և Վարդենիսը: Սևանա լճից դուրս եկող ջրերը Հրազդան գետով հոսում են դեպի Արաքս:

Հայկական ՍՍՌ-ում լճեր քիչ կան, եղածները մեծ մասամբ բարձրալեռնային են և փոքր, բացառությամբ Սևանա լճից: Հիշատակության արժանի են նաև Արփի, Քարի, Ակնա, Այղր և Սև լճերը: Լճերում կուտակվող մակերեսային հոսքի ջրերը մասնակցում են աղբյուրների սնուցմանը:

Ռեսպուբլիկայի տերիտորիայի մեծ մասը ծածկված է հրաբխային ծակոտկեն ու ճեղքատված ապառներով, ուստի անձրևների ու հալոցքի ջրերը հեշտությամբ ներծծվում են գետնի տակ, առաջացնելով ստորերկրյա հոսք դեպի գոգավորությունները: Ստորերկրյա ջրերը գոգավորություններում խորը չեն ու առանձին վայրերում մակերես են դուրս գալիս և օգտագործվում տնտեսական կարիքների համար: Դրա բնորոշ օրինակն է հանդիսանում Արարատյան գոգհովիտը:

Ջրաչափական քարտեզները կազմված են 110 ջրաչափական հատվածքների փաստական տվյալների հիման վրա, որոնք ունեն 5—32 տարվա դիտողությունների շարք և ընդգրկում են 1927—1958 թթ. ներառյալ:

Հուսալի ջրաչափական տվյալներ ընտրելուց հետո, բոլոր հատվածքների տվյալները բերված են մի ընդհանուր՝ 32-ամյա շարքի: Շարքերի երկարացումը կատարված է համանմանության մեթոդով: Ջրաչափական փաստացի դիտումներով հիմնականում ընդգրկվել են 1300—2500 մ միջին հավասարակշռված բարձրություն ունեցող գետավազանները, իսկ այդ սահմաններից դուրս հոսքը բնութագրելու համար կազմվել են ավազանի միջին բարձրությունից հոսքի մոդուլի կախվածության կորագծեր: Բազմամյա հոսքի բնութագրման վերոհիշյալ կորագծերը կառուցված են առանձին, համեմատաբար համասեռ տերիտորիաների համար, որովհետև հոսքի մոդուլի փոփոխման աստիճանը, կանապան շրջանների միջին բարձրության համեմատ, տարբեր է:

Քարտեզները կազմելիս օգտագործված են նաև մի շարք լրացուցիչ տվյալներ, որոնք վերաբերվում են ավազանի ջրաերկրաբանական կառուցվածքին, հողային ու բուսական ծածկոցին և այլն:

Նվազագույն հոսքի ձևավորման առանձնահատկությունները թույլ չեն տալիս բավարար կապ սահմանել հոսքի և տեղի բարձրության միջև: Այդ պատճառով էլ նվազագույն հոսքի քարտեզները կազմելիս իզոգծերը տարվել են ավազանի համապատասխան հավասարակշռված միջին բարձրությունների նվազագույն հոսքի մոդուլների փաստական տվյալների հիման վրա: Ջրբաժանները հատելու դեպքում հաշվի են առնված յուրաքանչյուր ավազանի ջրաբանական առանձնահատկությունները և այն կապերը, որ գոյություն ունեն նվազագույն հոսքի և ամառային ու ձմեռային ծանծաղման միջին ամսական ծախսի միջև:

Նվազագույն հոսքի քարտեզը ավելի ճշգրիտ կազմելու համար հաշվարկված են հոսքի մոդուլները ավազանի այն մասի համար, որը գտնվում է երկու հարևան ջրաչափական հատվածքների միջև, և գետի ամբողջ երկայնքում կատարված է հոսքի համաձայնեցում: Քարտեզներում ամառվա և ձմեռվա նվազագույն հոսքի տարբերությունը ստացվում է ի հաշիվ ոռոգման համար վերցվող ջրի:

Ֆիզիկա-աշխարհագրական պայմանների բարդության պատճառով դժվար է Հայկական ՍՍՌ հոսքի տարեկան բաշխման շրջանացում կատարել, այդ պատճառով հոսքի տարեկան բաշխման քարտեզի վրա նշված են միայն բնորոշ հիդրոգրաֆները:

Հատուկ քարտեզի վրա առանձնացված են լանդշաֆտա-ջրագրական շրջանները:

Դիտումների տվյալների պակասի հետևանքով գետերի պղտորության քարտեզը կազմված է ոչ թե իզոգծերի մեթոդով, այլ տարբեր աստիճանի պղտորությամբ բնորոշ ավազանների առանձնացման եղանակով:

Սելավների քարտեզը կազմված է համապատասխան շրջաններում կատարված արշավախմբային հետազոտությունների հիման վրա:


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԼԱՆԴՇԱՖՏԱ–ՋՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ
Ախուրյան-Հրազդանի
Սևանի
Դեբեդի
Ազատ-Արփայի
Աղստևի
Որոտան-Մեղրու
Ջրհավաք ավազանների սահմանները
Մասշտաբ 1: 1 000 000
կմ 10 0 10 20 30 40 50 կմ
ԵՐԵՎԱՆ
Նախիջևան
Ստեփանակերտ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
10 Միջին հոսքը 1 քառ. կմ տերիտորիայից (լիտր/վրկ)
Մասշտաբ 1:1 000 000
կմ 10 0 10 20 30 40 50 կմ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Հոսքի բաշխումը տարվա ընթացքում
(տոկոսներով տարեկանի նկատմամբ)
տոկոսներ
ամիսներ
Ծովակ Ջրաչափական պոստեր
Քարտեզում տրված կրճատումը՝ Գարգառի գբց -Գարգառի գետաբերանից ցած
ԵՐԵՎԱՆ
Մասշտաբ 1:1 000 000
կմ 10 0 10 20 30 40 50կմ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
200
Առավելագույն հոսքը l քառ. կմ տերիտորիայից (լիտր/վրկ)
Մասշտաբ 1:1 000 000
կմ 10 0 10 20 30 40 50 կմ
ԵՐԵՎԱՆ
ՎԱՆԱ ԼԻՃ
Սևանա լիճ
Մեծ Մասիս (Արարատ) լ.
Արագած լ.
Արագած
Արա-
գածոտն
Կոտայք
Գեղարքունիք
Վայոց Ձոր
Սյունիք
Տավուշ
Լոռի
Ջրհեղեղ
Ջրհեղեղ
Ջրհեղեղ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ամառային նվազագույն հոսքը 1 քառ. կմ տերիտորիայից (լիտր/վրկ)
Մասշտաբ 1:1 000 000
կմ 10 0 10 20 30 40 50 կմ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ձմեռային նվազագույն հոսքը 1 քառ. կմ տերիտորիայից (լիտր/վրկ)
ԵՐԵՎԱՆ
Նախիջևան
Ստեփանակերտ
Մասշտաբ 1:1 000 000
կմ 10 0 10 20 30 40 50 կմ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ
Նոսրալեռնային սելավալիր ափամերձ սելավատարածքներ
(սելավային հոսքերի առաջացման հավանականությունը 0,1 և ավելի)
Ցածրադիր սելավալիր սելավատարածքներ
(սելավային հոսքերի առաջացման հավանականությունը 0,01-0,1)
Ցածրադիր սելավալիր սելավատարածքներ
(սելավային հոսքերի առաջացման հավանականությունը 0,001-0,01)
Սելավային հոսքերի առաջացման հավանականությունը 0,001-ից պակաս է
Սելավների տիպերը
Ցածրադիր հոսք
(գրաբերուկային հագեցում են սելավալիր ափամերձ 10-30%-ի հիմնականում ավազային ալյուվիոնային նստվածքներ, խոշոր բեկորային նյութեր չկան)
Ցածրադիր հոսք
(գրաբերուկային հագեցում են սելավալիր ափամերձ 20-40%-ի, խոշոր բեկորային նյութեր 20-30%-ից պակաս են)
Բարձրադիր հոսք
(գրաբերուկային հագեցում են սելավալիր ափամերձ 10-20%-ի, պակաս-քան վայրի ֆրակցիաների պարունակությունը չնչին է)
Ջրհեղեղների հավանականությունը տարվա ընթացքում
Ամենամեծ ջրաբերուկների պարունակությունը տարվա ընթացքում (կգ/վրկ.)
Ամենամեծ ջրաբերուկների պարունակությունը 1մ3 ջրի մեջ (գրամներով)
մինչև 50
50–100
100–150
150–200
200–250
250–300
300–350
350-ից պակաս
Ամբ, որի վերջերին հոսքը դադարում է
Ջրհեղեղների պարունակությունը տարվա ընթացքում
Ջրհեղեղների պարունակությունը տարվա ընթացքում
Ջրհեղեղների պարունակությունը տարվա ընթացքում

ՀՈՂԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովետական Հայաստանը հայտնի է իբրև ֆիզիկա-աշխարհագրական բարդ կոմպլեքսների երկիր: Նրա բնության հիմնական գծերը պայմանավորված են աշխարհագրական դիրքով, երկրաբանական բարդ կառուցվածքով, ռելիեֆի ու կլիմայական պայմանների բազմազանությամբ:

Այդ գործոնների միասնության և փոխադարձ ազդեցության հետևանքով հողագոյացման պրոցեսները չափազանց բարդ են, իսկ հողային ծածկոցը խայտաբղետ է և ունի ցայտուն կերպով արտահայտված ուղղաձիգ գոտիականություն:

Հայկական ՍՍՌ տերիտորիայում դիտվում է ուղղաձիգ հողային գոտիների երկու հիմնական կոմպլեքս: Ռեսպուբլիկայի հյուսիսում (Կուրի ավազան), որտեղ հողագոյացման պրոցեսն ընթանում է ավելի բարեխառն կլիմայի պայմաններում, անապատային և կիսանապատային հողերը բացակայում են: Ամենացածրադիր վայրերում՝ ծովի մակարդակից 400—700 մ բարձրության վրա ձևավորվում են չոր տափաստանների շագանակագույն հողերը: Դրանցից բարձր տարածված են անտառային հողերն ու սևահողերը, որոնց վերին սահմանը հասնում է 1900—2000 մ բարձրության: Լեռնակատարների գոտին բնորոշ է դարչնագույն և սևահողանման ենթալպյան հողերով:

Ռեսպուբլիկայի հարավում (Արաքսի ավազան) մինչև 900 մ բարձրության վրա գերակշռում են անապատային, իսկ ջրովի տարածություններում՝ մշակված-ոռոգելի հողերը: Մինչև 1300 մ բարձրության վրա տարածված են խիստ քարքարոտ, տեղ-տեղ մշակված լեռնային գորշ հողերը: 1300—2400 մ բարձրության վրա տարածված են լեռնա-շագանակագույն հողերը և պարարտ սևահողերը:

Վերոհիշյալ շրջանների բարձրաբերձ լեռնային մասերում հողային գոտիների տարբերությունները մեղմանում են: Մինչև 3000 մ բարձրության վրա տարածվում են լեռնա-մարգագետնային դարչնագույն հողերը, իսկ ավելի վեր, մինչև 3500 մ՝ ալպյան գորգերի ճմատորֆային հողերը:

Մերձգագաթային գոտում կան մերձսառցադաշտային չձևավորված հողեր:

Բուսական ծածկի տեսակետից Հայկական ՍՍՌ տերիտորիան ընկած է երկրագնդի բուսա-աշխարհագրական տարբեր մարզերին պատկանող, միմյանցից խիստ տարբեր՝ Պոնտա-վրկանյան մեզոֆիլային և Իրանական քսերոֆիլային բուսա-աշխարհագրական պրովինցիաների շփման տեղում: Այդ պատճառով ռեսպուբլիկան աչքի է ընկնում բուսատեսակների բազմազանությամբ:

Բնական պայմանների բարդության հետևանքով ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա այստեղ միմյանց են հաջորդում անապատա-կիսանապատային բուսականությունը, ֆրիգանան (չորասեր թփուտային մացառուտներ), նոսրանտառուտներն ու անտառները, դրանցից վերև մեծ տարածություններ ծածկված են լեռնային տափաստաններով, որոնց հաջորդում են բարձրալեռնային մարգագետիններն ու ալպյան գունագեղ գորգերը:

Ռեսպուբլիկայի կենդանական աշխարհը կազմավորվել է երեք տարբեր՝ Փոքրասիական, Իրանական և Կովկասյան կենդանա-աշխարհագրական օկրուգների շփման տեղում:

Կովկասի, Իրանի և Փոքր Ասիայի կենդանական աշխարհի տարրերի գերակշռությունը «Կենդանա-աշխարհագրական շրջանացում» քարտեզում ցույց է տրված օկրուգներով, որոնք իրենց հերթին՝ ըստ կենդանական տեսակների բնորոշ կոմպլեքսների, բաժանվում են շրջանների ու ենթաշրջանների:

Կենդանիների տարածման բազմազանությունն ու մոզաիկությունն արտահայտելու համար կազմված է երկու քարտեզ՝ «Որսա-արդյունագործական կաթնասուններ» և «Գյուղատնտեսական կուլտուրաների վնասատու կրծողներ», ըստ որում կենդանիների ավելի մասսայական տեսակները ցույց են տրված անընդհատ արեալներով, իսկ հազվագյուտ տեսակները՝ նշաններով:

Բնական պայմանների մեծ բազմազանությունը դժվարացնում է տերիտորիայի ֆիզիկա-աշխարհագրական շրջանացումը: Խնդիրն ավելի է բարդանում նրանով, որ այստեղ իրար են հաջորդում պարզ արտահայտված ուղղաձիգ բնական լանդշաֆտային գոտիներ, որոնց տեղադրման բարձրությունն ու բնույթը ռեսպուբլիկայի տարբեր մասերում տարբեր են:

«Բնական-լանդշաֆտային գոտիները և ֆիզիկա-աշխարհագրական շրջանները» վերնագիրը կրող քարտեզը կազմված է ռեսպուբլիկայի ֆիզիկա-աշխարհագրական պայմանների համեմատական վերլուծության հիման վրա: Որոշ չափով հաշվի են առնված նաև Հայկական լեռնաշխարհի ստորաբաժանման պատմականորեն ձևավորված տրադիցիաները:

Հայկական ՍՍՌ էներգետիկ ռեսուրսները համարյա ամբողջովին բաղկացած են ջրի, քամու և արեգակի էներգիայից: Դրանցից էլեկտրականություն ստանալու միակ աղբյուրը առայժմ մնում է հոսող ջրի էներգիան: Ռեսպուբլիկայի ջրային էներգիայի պաշարները զգալի են: Դա պայմանավորված է տերիտորիայի բարձրությունների մեծ տատանումներով: Քարտեզի վրա ցույց տրված ջրաէներգետիկ պաշարները հաշվարկված են ջրաէներգետիկ տեղակայումների 75 տոկոս օգտակար գործողության գործակցի դեպքում: Հաշվի են առնված ջրային պաշարների կոմպլեքսային օգտագործման պահանջները (էներգետիկա, ոռոգում, ջրամատակարարում), ինչպես նաև ջրաէներգետիկ տեղակայումների աշխատանքի տեխնիկական պայմանները ձմռանը:

Կառուցվելիք ՀԷԿ-երի հզորությունը սահմանված է ջրի ծախսի վեցամսյա ապահովվածության և էլեկտրաէներգիայի սպառման գրաֆիկի օրական կարգավորման հիման վրա: Ջրային էներգիայի պաշարները ճշտելիս հաշվի են առնվել նաև գործող ՀԷԿ-երի ցուցանիշները (առ 1-ը հունվարի 1960 թ.): Դրա հետևանքով պարզված է, որ Հայկական ՍՍՌ տերիտորիայում եղած 146 գետերի և 14 ոռոգիչ ջրանցքների ջրանկումների վրա կարելի է կառուցել 524 ՀԷԿ՝ յուրաքանչյուրը 50 կվտ և ավելի կարողությամբ: Դրանց ընդհանուր կարողությունը (յուրացված ռեսուրսների հետ միասին) հասնում է մոտ 1750 հազար կվտ, տարեկան մոտավորապես 6,5 մլրդ կվտժ էլեկտրաէներգիայի միջին արտադրողականությամբ:

«Ջրաէներգառեսուրսներ» քարտեզում ցույց են տրված միայն 1000 կվտ և ավելի կարողություն ունեցող ՀԷԿ-երը: Նրանց կարողությունը կազմում է 1 530 հազ. կվտ (բոլոր էլեկտրակայանների կարողության 87 տոկոսը), էլեկտրաէներգիայի տարեկան 5,7 մլրդ կվտժ միջին արտադրողականությամբ:

Հայկական ՍՍՌ տերիտորիայի միջին հագեցվածությունը ջրաէներգառեսուրսներով (էներգամոդուլը) 1 քառ. կմ վրա կազմում է 22 հազ. կվտժ (առանց Սևանա լճի մակերեսի):

Տեխնիկայի զարգացման, կիսահաղորդիչների լայն կիրառման, էներգիայի կուտակման նոր եղանակների մշակման շնորհիվ Հայկական ՍՍՌ-ում գործնական նոր հնարավորություններ են ստեղծվում արեգակնային և քամու առատ էներգիայի օգտագործման համար: Սակայն, տեխնիկայի ժամանակակից հնարավորությունների պայմաններում արեգակնային էներգիան առայժմ գործնական լայն կիրառություն չունի, իսկ նրա ռեսուրսները ուսումնասիրելու մեթոդիկան դեռևս բավարար չափով մշակված չէ: Այդ պատճառով քարտեզում տրված է արեգակնային ուղղակի ճառագայթման տարեկան քանակի (կիլոկալորիաներով՝ 1 սմ² մակերեսի վրա) գոտիական բաշխումը: Քամու էներգիայի ռեսուրսները բնութագրված են ըստ Դ—18 կամ Դ—30 տիպի մեկ հողմաէլեկտրատեղակայման տարեկան հնարավոր արտադրողականության ցուցանիշի: Մեկ քառ. կմ տերիտորիայի վրա տեխնիկապես բարենպաստ պայմաններում կարելի է տեղակայել համապատասխանաբար 8 և 5 շարժիչ:

Հողմաէներգետիկայի զարգացման համար առավել հեռանկարային են բարձրալեռնային գոտին և լեռնանցքները, որտեղ քամու ուժի օրական ու տարեկան ընթացքը առավել բարենպաստ են հողմաէներգատեղակայումների համար:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՀՈՂԵՐ

1 — Ալյուվիալ-մարգագետնային աղակալված և ալկալացած հողերի կոմպլեքս

2 — Հնուց ոռոգվող ալյուվիալ մարգագետնային հողեր

3 — Մարգագետնային աղուտներ և ալկալի հողեր

ԼԵՌՆԱՅԻՆ ՔԱՐՔԱՐՈՏ ԿԻՍԱԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՀՈՂԵՐ

4 — Լեռնային գորշ, տեղ-տեղ գիպսակալված և աղակալված հողեր

5 — Ջրովի և հնուց ոռոգվող կուլտուրացված գորշ լեռնային հողեր

6 — Գիպսակալված և տեղ-տեղ աղակալված բազմագույն հողեր

ԼԵՌՆԱ-ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՀՈՂԵՐ

7 — Չոր տափաստանների լեռնա-շագանակագույն հողեր

8 — Չափավոր խոնավ տափաստանների լեռնային կարբոնատային և տիպիկ սևահողեր սակավազոր և թույլ զարգացած սևահողերի կոմպլեքսով

9 — Խոնավ տափաստանների աղազերծված տեղ-տեղ պարարտ լեռնային սևահողեր

10 — Մարգագետնա-ճահճային հողեր

Լեռնային տափաստանների կուլտուրացված ոռոգվող հողեր

ԼԵՌՆԱ-ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ

11 — Լեռնա-անտառային տափաստանացված հողեր

12 — Չոր անտառների ու թփուտների լեռնա-անտառային դարչնագույն հողեր

13 — Չափավոր խոնավ անտառների լեռնա-անտառային գորշ հողեր

ԱԼՊՅԱՆ ՀՈՂԵՐ

14 — Ենթալպյան լեռնա-մարգագետնային սևահողանման հողեր

15 — Ենթալպյան լեռնա-մարգագետնային դարչնագույն հողեր

16 — Ալպյան լեռնա-մարգագետնային ճմա-տորֆային հողեր

17 — Ջրունամերձ գոտու չզարգացած հողեր

18 — Սևանա լճի մերկացած հատակահողեր

Մասշտաբ 1:1 000 000

կմ 10 0 10 20 30 40 50 կմ

ՏԱՐԲԵՐ ՏԻՊԻ ՀՈՂԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ



A – կուտակման հորիզոն
A_0 – կուտակման ճմային հորիզոն
A_1, A_2 } կուտակման հորիզոնի անցումնային ենթահորիզոններ
B – ներլվացման հորիզոն
B_1, B_2 } ներլվացման հորիզոնի անցումնային ենթահորիզոններ
C – ներլվացման հորիզոն, հաճախ հանդես է գալիս մայրական հողակազմող ապառի ձևով
C_1, C_2 } հիմնական հորիզոնի անցումնային ենթահորիզոններ
D – արմատական մայրական ապառներ

ՀՈՂԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ՏԱՐԲԵՐ ԽՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երևան. Բաց-գորշ սակավազոր քարքարոտ հող կարբոնատային հողմահարման կեղևի վրա



Արագած բ/լ օդ. կ. Լեռնա-ճմա-մարգագետնային սակավազոր հող




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԵՎ ԿԻՍԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
1 Սարսազանային անապատ
2 Գեղածննկիկային անապատ
3 Հազարատերևուկային անապատ
4 Գիպսոֆիլ անապատ՝ համմադա
5 Օշանային անապատ
6 Օշինդրային կիսաանապատ հոտավետ օշինդրով
ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7 Կծմախոտային տափաստան
8 Հացազգիների և տարախոտա-հացազգիների տափաստաններ (տեղ-տեղ տրագանտային էլեմենտներով)
9 Ջրից ազատված հատակահողերի բուսականություն
10 Մարգագետնային տափաստան
ՖՐԻԳԱՆՈՒԴ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
11 Ֆրիգանայի, տրագանտների և տոմիլյարի կոմպլեքս
ՆՈՍՐԱՆՏԱՌՈՒՏՆԵՐ
12 Գիհու նոսրանտառուտներ
13 Սաղարթավոր նոսրանտառուտներ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
14 Հաճարենու և կաղնու կոմպլեքս
15 Հաճարենու անտառներ
16 Չոր կաղնուտների (արաքսյան կաղնիով) և քսերոֆիլ նոսրանտառուտների կոմպլեքս
17 Չոր կաղնուտներ արևելյան կաղնիով
18 Կաղնու և կաղնու-բոխու անտառ՝ վրացական կաղնիով
19 Կաղնու և կաղնու-բոխու անտառ՝ արևելյան կաղնիով
ԵՆԹԱԼՊՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐ
20 Նոսրանտառուտներ (հաճարենու, կեչու և կաղնու), բարձրախոտի և մարգագետինների կոմպլեքսով
ԱԼՊՅԱՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
21 Ստորին ալպյան մարգագետիններ
22 Ալպյան մարգագետինների, գորգերի, խիտ ճմավոր խմբավորումների և տրագանտային աստրագալների կոմպլեքս
23 Զյունամերձ գոտու բուսականություն
ՋՐԱ-ՃԱՀՃԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
24 Բոշխի ճահիճներ և ճահճացած մարգագետիններ
Մասշտաբ 1:1 000 000
կմ 0 10 20 30 40 50 կմ

ԿԵՆԴԱՆԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՄԱՍ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԿԵՆԴԱՆԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳՆԵՐԸ ԵՎ ԾՐՋԱՆՆԵՐԸ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՕԿՐՈՒԳ

- Անդրկովկասի բարձրաբերձնային շրջան
- Անդրկովկասի անտառային շրջան
  - Արաքսի ավազանի անտառների ենթաշրջան
  - Կուրի ավազանի անտառների ենթաշրջան
- Հայկական արեվելյան լեռնանտառային շրջան
  - Ջանգեզուրի անտառների ենթաշրջան

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՕԿՐՈՒԳ

- Անդրկովկասի կիսաանապատային շրջան
  - Արաքսի հովտի ենթաշրջան
- Անդրկովկասի տափաստանային շրջան
  - Շիրակի ենթաշրջան
  - Սևանի ենթաշրջան
- Լոռու ենթաշրջան

ԻՐԱՆԱԿԱՆ ՕԿՐՈՒԳ

- Արեվելա-անդրկովկասյան մերձարեվադարձային շրջան
  - Կուրի ենթաշրջան
  - Ջանգեզուր-Ղարաբաղյան ենթաշրջան

ԿԵՆԴԱՆԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԾՐՋԱՆԱՅՈՒՄ

ՈՐՍԱ-ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Ամենուրեք տարածված են՝ գալլ, աղվես, նապաստակ, կզաքիս, գորշուկ, աքիս, լուսան
- Բեզոարյան այծ (տարածման արևմտյան սահմանը)
- Մուֆլոն (վայրի ոչխար)
- Այծյամ
- Վարազ
- Բծավոր եղջերու
- Զախկալ
- Ջրսամույր
- Ճահճակուղբ
- Խայտաքիս
- Եղեգնակատու
- Անտառակատու
- Արջ
- Ընձառյուծ

Լիակատար պահպանության տակ են՝ բեզոարյան այծը, մուֆլոնը, այծյամը, բծավոր եղջերուն

Մասշտաբ 1:1 500 000

կմ 15 0 15 30 45 60 75 կմ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Սովորական դաշտամուկ
- Հասարակական դաշտամուկ
- Սարահարթային դաշտամուկ
- Ջյուլնաբնակ դաշտամուկ
- Պարսկական պվազամուկ
- Փոքրասիական ավազամուկ
- Վինոգրադովի ավազամուկ
- Հարավային ավազամուկ
- Անտառային քնամուկ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Անդրկովկասյան համստեր
- Լեռնային կույր մուկ
- Եվրոպական գետնասկյուռ
- Քնամուկ
- Ջրառնետ
- Տերիտորիաներ, որտեղ տվյալ կրծողները բացակայում են

Մասշտաբ 1:1 500 000

կմ 15 0 15 30 45 60 75 կմ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Խոշոր գետավազանների տեսակարար ջրաէներգառեսուրսները
(1 քառ. կմ վրա տարեկան հազար կվտ-ժ)



Հրազդանի ջրաէներգառեսուրսները ցույց են տրված Սևանից ոռոգման գրաֆիկով ջրի բացթողման պայմաններում (1 մլրդ կվտ-ժ)
Արաքս և Ախուրյան գետերի պետական սահմանով անցնող հատվածներում ցույց է տրված ռեսուրսների 50%-ը
Սևանի ավազանի ջրային էներգառեսուրսները հաշված են առանց Լճի մակերեսի

Ջրային էներգառեսուրսները (արդյունաբերական պաշարները ըստ ավազանների)



Հիդրոէլեկտրակայանները (հիմնական)



Յուրացված
Չյուրացված
1 քառակուսին-2 հազ.կվտ

Գործող
Կառուցվող
Հնարավոր

Հայկական ՍՍՌ ջրային էներգառեսուրսների փաստական օգտագործման տեսակարար կշիռը (տոկոսներով)



ՋՐԱՅԻՆ ԷՆԵՐԳԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ, ՀՈՂՄԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԷՆԵՐԳԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Արեգակի ուղղակի ճառագայթման գումարը ճառագայթներին ուղղահայաց մակերևույթի վրա տարեկան կկալ/սմ²



Դ-18 և Դ-30 տիպի մեկ հողմաէլեկտրակայանին ընկնող էլեկտրաէներգիայի տարեկան հնարավոր արտադրանքը հազ. կվտ-ժ-ով



Դ-18	10–50	50–100	100–150
Դ-30	10–150	150–300	300–500

Վառելիքային ռեսուրսների հանքավայրերը (տեղական նշանակություն ունեցող)

- Տորֆ
- Այրվող թերթաքարեր
- Ածուխ (գորշ և լիգնիտ)
- Տաք աղբյուրներ

Մասշտաբ 1:1 500 000



ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՈՑՆԵՐ

Արգելավայրեր

Արգելոցներ

1 Արեգունի. Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին -3000 հա

2 Գյուլագարակի անտառապետություն՝ Գյուլագարակ գյուղից հարավ -արևմուտք-2 600 հա

3 Ջերմուկի անտառապետություն -3900 հա

4 Հեր-հերի անտառապետություն -6100 հա

5 Սևանա լճի ջրից ազատված հատակային գրունտներ

6 Բանքի սոճու պուրակ Ծաղկաձորի մոտ —4 հա

7 Գորովանի ավազուտները Վեդի գյուղից հարավ-200 հա

8 Արագած լեռան հարավային գագաթի մոտ ալպյան մարգագետինների տեղամաս-300 հա

9 Կովկասյան ռոդոդենդրոնի մացառուտներ՝ Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին

10 Գյունեյի անտառապետություն-3300 հա

11 Ծավի սոսիների պուրակը-60 հա

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԲՆԱԿԱՆ-ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ

- Անապատային
- Կիսաանապատային
- Չոր լեռնա-տափաստանային
- Լեռնա-տափաստանային
- Լեռնա-անտառային
- Ալպյան
- Նիվալ (ձյունային)

ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱՇՐՋԱՆՆԵՐԸ

I ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳՈԳԱՀՈՎԻՏ
1 Արարատյան դաշտ
2 Արևմտյան-Գեղամա
3 Կոտայք-Եղվարդի
4 Հարավային-Արագածի

II ՇԻՐԱԿԻ
5 Շիրակի
6 Ամասիայի

III ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ
7 Լոռու
8 Փամբակի
9 Միջին-Դեբեդի

IV ԱՂՍՏԵՎ-ԴԵԲԵԴԻ
10 Ստորին-Դեբեդի
11 Աղստև-Տավուշի
12 Վերին-Աղստևի

V ՍԵՎԱՆԻ
13 Արեգունու
14 Մարմարիկ-Հրազդանի
15 Գեղամա-Վարդենիսի
16 Մասրիկի

VI ԱՐՓԱՅԻ ԳՈԳԱՀՈՎԻՏ
17 Եղեգիսի
18 Վերին-Արփայի

VII ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
19 Որոտանի
20 Գորիսի
21 Ողջու
22 Մեղրու

Շրջանների սահմանները

Ենթաշրջանների սահմանները

Մասշտաբ 1:1 000 000

կմ 10 0 10 20 30 40 50 կմ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ բնակչությունը, ըստ 1959 թ. մարդահամարի, կազմում է 1763 հազ. մարդ (առ 1 հունվարի 1961 թ. տվյալներով՝ 1893 հազ. մարդ): Բնակչության թվով Հայկական ՍՍՌ միութենական ռեսպուբլիկաների շարքում գրավում է 13-րդ տեղը:

Բնակչության բուռն աճը համընկնում է Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայի տնտեսական և կուլտուրական վարգացման ժամանակաշրջանի հետ: 1926—1959 թթ. ժամանակամիջոցում, չնայած երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառած զգալի կորուստներին ու ծնելության նվազմանը, Հայկական ՍՍՌ բնակչությունը երկու անգամ ավելացել է: Հայկական ՍՍՌ բնակչության բնական աճը ՍՍՌՄ-ում ամենաբարձրներից մեկն է և վերջին տասնամյակում հասնում է տարեկան մոտավորապես 3 տոկոսի:

Միութենական ռեսպուբլիկաների շարքում Սովետական Հայաստանը բնակչության ազգային կազմով ամենից համասեռն է. հայերը կազմում են բնակչության 88 տոկոսը, երկրորդ տեղը գրավում են ադրբեջանցիները (6,1 տոկոս), երրորդը՝ ռուսները (3,2 տոկոս):

Սովետական Միության մեջ հայերի թիվը հասնում է 2787 հազ. (ըստ 1959 թ. մարդահամարի), որոնց մեծ մասը՝ 87,4 տոկոսը բնակվում է Անդրկովկասում, այդ թվում Հայկական ՍՍՌ-ում՝ 1552 հազ., Վրացական ՍՍՌ-ում՝ 443 հազ., Ադրբեջանական ՍՍՌ-ում՝ 442 հազ.: Անդրկովկասի սահմաններից դուրս կա 350 հազ. հայ (Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում, Ռուսաստանի ֆեդերացիայի և Ուկրաինայի խոշոր քաղաքներում):

Հայկական ՍՍՌ-ում բնակչության խտությունը կազմում է 59,3 մարդ 1 ք. կմ-ի վրա, մինչդեռ ՍՍՌՄ միջինը ընդամենը կազմում է 9,4 մարդ 1 ք. կմ-ի վրա: Բնակչության խտությամբ Հայկական ՍՍՌ զիջում է միայն Մոլդավական ՍՍՌ-ին և Ուկրաինական ՍՍՌ-ին:

Ռեսպուբլիկայի բնակչության տեղաբաշխումը աչքի է ընկնում խիստ անհամաչափությամբ, որը պայմանավորված է տերիտորիայի լեռնային բնույթով: Ամենախիտ կերպով բնակեցված է Արարատյան դաշտը՝ արդյունաբերության և ինտենսիվ (ոռոգվող) գյուղատնտեսության առավել վարգացած շրջանը, որտեղ կենտրոնացած է ռեսպուբլիկայի ամբողջ բնակչության 42 տոկոսը: Այդ գոտում միջին խտությունը 1 ք. կմ-ի վրա կազմում է մոտավորապես 360 մարդ: Արարատյան դաշտից հետո առավել մեծ խտություն ունեն գոգհովիտներն ու սարավանդները, մասնավորապես Շիրակն ու Սևանի ավազանը (1 ք. կմ-ի վրա 100—250 մարդ):

Բնակչության հիմնական զանգվածը՝ 96 տոկոսը բնակվում է ծովի մակարդակից ավելի քան 800 մ բարձրության վրա: Ըստ բարձրության գոնաների բնակչությունը տեղաբաշխված է հետևյալ կերպ.

	մինչև	600 մ—	0,3 տոկոս
600-ից	մինչև	1000 մ—	48,9 տոկոս
1000-ից	մինչև	1400 մ—	12,5 տոկոս
1400-ից	մինչև	1800 մ—	23,4 տոկոս
1800-ից	մինչև	2200 մ—	14,7 տոկոս
2200-ից	բարձր	—	0,2 տոկոս:

Սովետական տարիներին արդյունաբերության վարգացման բարձր տեմպերը հանգեցրին քաղաքային բնակչության բուռն աճին: 1913 թ. Հայկական ՍՍՌ ներկա տերիտորիայի վրա քաղաքային բնակչությունը կազմում էր 10,4 տոկոս, իսկ ներկայումս՝ 50 տոկոս: Այդ աճը, ամենից առաջ, տեղի է ունեցել ի հաշիվ գյուղական բնակչության ներհոսքի և գյուղական բնակավայրերի՝ քաղաքներ կամ քաղաքատիպ ավաններ դառնալու:

Հայկական ՍՍՌ-ում կա 15 քաղաք և 24 քաղաքատիպ ավան (մինչև Սովետական իշխանության հաստատումը եղել է 4 քաղաք):

Հայաստանը հին և հարուստ մշակույթի երկիր է: Բազմաթիվ դարերի ընթացքում հայ ժողովուրդը կերտել է ինքնատիպ մշակույթ, իր ավանդը ներդնելով գիտության ու արվեստի համաշխարհային գանձարանը:

Հայ ժողովրդի մշակույթը հատկապես բուռն ծաղկում ապրեց Սովետական իշխանության հաստատումից հետո, երբ այն դարձավ աշխատավորական լայն զանգվածների սեփականությունը: Սոցիալիստական արմատական վերափոխումների իրականացման հետևանքով չտեսնված ուժով ծավալվեց կուլտուրական շինարարությունը, ծաղկեց նոր սոցիալիստական մշակույթը:

Սովետական Հայաստանը համատարած գրագիտության երկիր է: 1958—1959 ուս. տարում ռեսպուբլիկայի 1204 հանրակրթական դպրոցներում սովորում էր 280,6 հազ. աշակերտ, 37 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 14 հազ., իսկ 11 բարձրագույն ուսումնական հաստատություններում (Երևանի համալսարանում՝ հիմնադրված 1920 թ., պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական ինստիտուտներում, կոնսերվատորիայում և այլն)՝ 19,6 հազ. ուսանող: Բնակչության յուրաքանչյուր 1000 մարդուն ընկնում է միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ կրթությամբ՝ 289 մարդ և լրիվ բարձրագույն կրթությամբ՝ 28 մարդ:

Սովետական Հայաստանի 76 գիտական հաստատություններում և բուհերում կա 4084 գիտաշխատող, այդ թվում՝ 158 գիտության դոկտոր և 1431 գիտության թեկնածու:

Ռեսպուբլիկայում գիտության վարգացման համար մեծ նշանակություն ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը (1943 թ.), որի կազմում ներկայումս հաշվվում է 28 գիտահետազոտական և գիտական հիմնարկ:

Զարգացման բարձր մակարդակի է հասել հայկական թատերական արվեստը, որն ունի ավելի քան 2000 տարվա պատմություն: 1958 թ. ռեսպուբլիկայում գործում էին 12 թատրոն, այդ թվում՝ Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը, Գ. Սունդուկյանի անվան Կարմիր դրոշի շքանշանակիր հայկական դրամատիկական ակադեմիական թատրոնը, Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը և այլն, 404 կինոսարքավորում, 1249 մասսայական գրադարան, 20 թանգարան:

Սովետական իշխանության տարիներին արմատապես բարելավվեց բնակչության բժշկական սպասարկումը, որի, ինչպես նաև ժողովրդի նյութական բարեկեցության մշտական վերելքի շնորհիվ խիստ կրճատվեց մահացությունը և մեծացավ բնակչության բնական աճը: Սովետական Հայաստանի յուրաքանչյուր 10.000 բնակչին ընկնում է 62,1 հիվանդանոցային մահճակալ և 21,8 բժիշկ (1913 թվականին համապատասխանաբար՝ 2,1 և 0,6): Ստեղծվեցին շատ առողջարաններ, հանգստյան տներ, որոնցից առանձնապես աչքի են ընկնում համամիութենական հռչակ ձեռք բերած Ջերմուկ, Արզնի, Դիլիջան առողջարանները:

Ժողովրդական տնտեսության վարգացման յոթնամյա պլանը նոր հնարավորություններ է ստեղծում Սովետական Հայաստանի բնակչության նյութական բարեկեցության հետագա բարձրացման, գիտության և մշակույթի վարգացման համար:

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ 1914 թ.


34° Գրինվիչից արևելք
36°
38°
40°
42°
44°
46°
48°
50°
42°
40°
38°
36°
ՍԵՎ ԾՈՎ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԿԱՍՊԻԿ ԾՈՎ
ԿԻՊՐՈՍ ԿՂ.
Սոչի
Սուխում
Փոթի
Բաթում
Կաստամունի
Սինոպ
Սամսոն
Տրապիզոն
Օրդու
Ամասիա
Եշիլ-Իրմակ
Կզըլ-Իրմակ
Չորում
Յոզղադ
Անկյուրի
Սեբաստիա (Սվաս)
Զարա
Տուզ լիճ
Կեսարիա
Նիկտե
Հաճըն
Կոկիսոն
Ալբիստան
Զեյթուն
Մարաշ
Անտիոք
Լաոդիկոն
Մերսին
Ադանա
Ադրիանուպոլիս
Հալեպ
Ուռհա (Եդեսիա)
Ղարա
Եփրատ
Դեր-էլ-Զոր
Խաբուր
Նասիբին
Մոսուլ
0,8
0,6
0,4
Ռևանդուզ
Արբելա
Մեծ Զապ
Ջուդի
Փոքր Զապ
Քերքուք
Սուլեյմանիա
Սեյնե
Բիջար
Ղազվին
Ջենջան
Մարաղա
Ուրմիա
Ուրմիո (Ռեզայե) լիճ
Ջաղատու (Ջեռիճե-ռուդ)
Սաֆի-ռուդ
Ղարադաղ (Ջեռիճե-ռուդ)
Ռեշտ
Միանդ
Սարդասուր
Թավրիզ
Խոյ
Մարանդ
Սհար
Արդաշիր
Վան
Վանա լիճ
Ուրմանց
Ագուլիս
Մակու
Նախիջևան
Ջուլֆա
Նոր Բայազետ
Երևան
Գյումուշխանե
Կարին (Էրզրում)
Էրզրում
Ալաշկերտ
Դիադին
Բայազետ
Կարս
Օլթի
Ախալցխա
Ախալքալաք
Ախուրյան
Արտահան
Կուր
Ախալցիխե
Թիֆլիս
Գորի
Մցխեթա
Սուրամ
Քութայիս
Դիմա
Ռիոնի
Զուգդիդի
Փոթի
Սուխում
Գագրա
Գուդաուտա
Գրոզնի
Վլադիկավկազ
Պետրովսկ
Թեմիր-խան-Շուրա
Դերբենտ
Սամուր
Ղուբա
Բաքու
Կասպից ծով
Ղարաբաղ
Ղարաբաղի լեռնաշխարհ
Ղարաբաղի հարթավայր
Մուղանի հարթավայր
Ղարաբաղի լեռնաշղթա
Զանգեզուրի լեռնաշղթա
Սևանա լիճ
Սևանի թերակղզի
Գեղարքունիքի սարահարթ
Գեղամա լեռնաշղթա
Արագած
Արարատյան դաշտ
Արարատ
Մասիս
Ալագյազ
Ազատ
Ախուրյան
Ղարսի սարահարթ
Ղարսի մարզ
Ալաշկերտի հարթավայր
Մուշի դաշտ
Մուշ
Բիթլիս
Բիթլիսի լեռնանցք
Տավրոսի լեռներ
Տավրոսի լեռնաշղթա
Ամանոսի լեռներ
Ամանոսի լեռնաշղթա
Ամանոսի լեռնանցք
Ամանոս
Ամանոսի դարպաս
Ամանոսի ծոց
Ամանոսի թերակղզի
Ամանոսի հրվանդան
Ամանոսի հրվանդանի լեռնանցք
Ամանոսի հրվանդանի լեռնաշղթա
Ամանոսի հրվանդանի հարթավայր
Ամանոսի հրվանդանի հրվանդան
Ամանոսի հրվանդանի ծոց
Ամանոսի հրվանդանի թերակղզի



Արևելյան Հայաստանում, առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողությունների, 1918—1920 թթ. թուրքական հրոսակախմբերի ասպատակությունների, անդրկովկասյան բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների կազմակերպած ու հրահրած ազգամիջյան կոտորածների, դաշնակների անփառունակ տիրապետության, սովի ու համաճարակի հետևանքով վոհվեց ավելի քան կես միլիոն հայ:

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումով վերջ տրվեց հայ ժողովրդի դարավոր տառապանքներին: Պայմաններ ստեղծվեցին նրա ազգային վերածննդի համար: Սովետական Հայաստանի բնակչությունն սկսում է աճել և արդեն 1926 թվականին հասնում է 881 հազ. մարդու՝ 1920 թ. 720 հազարի դիմաց:

Հայերի գաղթականական շարժումների պատմության մեջ առաջին անգամ սկսվում է պետական լայն մասշտաբներով կազմակերպված հայրենադարձություն դեպի Հայկական ՍՍՌ: 1921 — 1940 թթ. ժամանակամիջոցում արտասահմանյան երկրներից դեպի Հայկական ՍՍՌ հայրենադարձվեց 75 հազ. հայ: Հայրենիք վերադառնալու շարժումն առանձնապես ուժեղանում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1946—1948 թթ. մասսայական հայրենադարձություն է կատարվում Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրանից, Հունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից: Հետպատերազմյան տարիներին հայրենադարձվել է մոտ 100 հազ. հայ:

Ներկայումս արտասահմանյան երկրներում հայերի ընդհանուր թիվը կազմում է ավելի քան 1,5 մլն. մարդ: Առավել բազմամարդ հայ գաղութներ կան ԱՄՆ-ում (ավելի քան 300 հազ. մարդ), Թուրքիայում (ավելի քան 250 հազ. մարդ), Սիրիայում (մոտ 200 հազ. մարդ), Ֆրանսիայում (120 հազ. մարդ), Իրանում (120 հազ. մարդ), Լիբանանում (100 հազ. մարդ): Զգալի թվով հայեր են ապրում նաև Բուլղարիայում, Ռումինիայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Իրաքում և մի շարք այլ երկրներում:


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Հայ բնակչության թիվը Հայկական ՍՍՌ-ից դուրս (հազարներով)
0,1–1
1–10
10–50
50–100
100–150
150–250
250–400
400–ից ավելի
ՀԱՅԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ 1959 թթ.
(տոկոսներով).
4 448 հազ.
27,8
37,3
34,9
Հայկական ՍՍՌ-ում
ՍՍՌՄ ռեսպուբլիկաներում (առանց Հայկական ՍՍՌ)
Արտասահմանյան երկրներում
ԹՎԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ ՆՇՎԱԾ ԵՆ
1. Հայկական ՍՍՌ
2. Վրացական ՍՍՌ
3. Ադրբեջանական ՍՍՌ
4. ՄԱՌ (Սիրիական շրջան)
5. Լիբանան
6. Հորդանան
7. Իսրայել
8. Ուրուգվայ
9. Բելգիա
10. Նիդերլանդներ
11. Շվեյցարիա
12. Քուվեյթ (Բրիտ.)
13. Չիլի
14. Կուբա
15. Կիպրոս
16. Մոլդավական ՍՍՌ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Սլաքի 1 մմ լայնությունը=5000 մարդու
մինչև 500 մարդ
Հայրենադարձությունը
ըստ ժամանակաշրջանների
1921–1941 թթ.
1946–1958 թթ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ՍՍՌ
ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ (ԵԳԻՊՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ)
ՍԱՈՒԴԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ
ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ
ԱՄՆ-ից
Ուրուգվայից
Արգենտինայից
Հունիսի

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բնակչության խտությունը ըստ բարձրության զոնաների

Բարձրությունը մետրերով — մարդ 1 քառ. կմ վրա

- մինչև 1000 — 360 (Արարատյան դաշտում) 100–200 (մնացած շրջաններում)
- 1000–1400 — 20–30
- 1400–1800 — 40–50
- 1800–2250 — 30–40
- 2250-ից բարձր — Բարձրալեռնային չբնակեցված տերիտորիաներ

Անտառներ

Բնակավայրերի տիպերը

- Քաղաքներ և քաղաքատիպ ավաններ
- Գյուղական բնակավայրեր

Բնակավայրերի մարդաքանակը

- 500 000-ից ավելի
- 100 000–500 000
- 25 000–100 000
- 10 000–25 000
- 5 000–10 000
- 3 000–5 000
- 2 000–3 000
- 1 000–2 000
- 500–1 000
- 200–500
- մինչև 200 բնակիչ

Բնակավայրերի ազգային կազմը (ըստ գերակշռության)

- Հայեր
- Ռուսներ
- Ասորիներ
- Ադրբեջանցիներ
- Քրդեր
- Հույներ

Անդրկովկասի ռեսպուբլիկաների բնակչության ազգային կազմը (տոկոսներով)



Հայ բնակչության տեղաբաշխումը Անդրկովկասի ռեսպուբլիկաներում (տոկոսներով)



Հայկական ՍՍՌ բնակչության թվի աճը ըստ մարդահամարների (հազ. բնակիչ)



Հայկական ՍՍՌ բնակչության ազգային կազմը (տոկոսներով)



Բնակչության խտությունը ըստ վարչական շրջանների



Տերիտորիան և բնակչությունը ըստ բարձրության զոնաների



Մասշտաբ 1:1 000 000

կմ 10 0 10 20 30 40 50 կմ

ԱՐԳԻՇՏԻ I ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԷՐԵԲՈՒՆՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ (Ք.Ա. 783 Թ.)



Խալդյան մեծությամբ, Արգիշտին Մենուևյան, այս բերդը հոյակապ կառուցեց, կոչեցի քաղաք Էրեբունի անվամբ (որպես) Բիայնա երկրների փառք, թշնամու երկրներին ի սարսափ: Արգիշտին ասում է հողից աղյուսներ պատրաստելով կատարեցի ձեռնարկություններ (կառուցումներ) հզոր այստեղ: Խալդյան մեծությամբ Արգիշտին Մենուևյան թագավոր (է) հզոր, թագավոր՝ Բիայնա երկրների, տերը՝ Տուշպա քաղաքի:

1913 թ.



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԸ



XVIII դ. վերջը



XIX դ. կեսերը



Երևան քաղաքի բնակչության թվի աճը (հազ. բնակիչ)



Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է: Հնագիտական նյութերը վկայում են, որ Երևանի ներկա տերիտորիան բնակեցված է եղել դեռևս 6 000 տարի առաջ:

Քաղաքը գտնվում է Հրազդան գետի ափին, ծովի մակարդակից 900-1 300 մետր բարձրության վրա Արարատյան դաշտին նայող գեղատեսիլ ամֆիթատրոնում: Քաղաքից դեպի հարավ բացվում է Մասիս (Արարատ) լեռան ձյունապատ գագաթների վեհասքանչ տեսարանը:

Երևանը արևաշատ քաղաք է: Նրա կլիման խիստ ցամաքային է՝ տաք, չոր, տևական ամառով և համեմատաբար ցուրտ ձմեռով: Ամենահաճելի եղանակը աշունն է:

Գիտնականների ենթադրությամբ „Երևան" անվանումն առաջացել է քաղաքի ներկա տերիտորիայի սահմաններում գտնվող Արինբերդ բլրի շրջակայքում ուրարտական Արգիշտի թագավորի կողմից հիմնադրված (մ.թ.ա. 783թ.) „Էրեբունի" („Էրևունի") միջնաբերդի անունից:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Երևանը դարձավ Հայկական մարզի, իսկ այնուհետև Երևանի նահանգի կենտրոնը:

1920 թվականից Երևանը Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մայրաքաղաքն է: Պատմական կարճ ժամանակամիջոցում նա դարձել է Սովետական Միության արդյունաբերական, կուլտուրական և գիտական խոշոր կենտրոններից մեկը: 1959 թվականին նրա բնակչությունը 1939 թվականի համեմատությամբ, աճել է 2,5 անգամ, իսկ 1913 թվականի համեմատությամբ՝ 17,6 անգամ, կազմելով 509,3 հազ. մարդ (1961 թ.հունվարի 1-ի տվյալներով՝ 558,3 հազ. մարդ): Բնակչության թվով Երևանը ԱՍՌՄ-քաղաքների շարքում գրավում է 25-րդ տեղը, իսկ միութենական ռեսպուբլիկաների մայրաքաղաքների շարքում 8-րդ տեղը:

Տասնյակ տնայնագործական և կիսատնայնագործական արդյունաբերական ձեռնարկությունների փոխարեն Սովետական իշխանության տարիներին ստեղծվել են բազմաթիվ ժամանակակից գործարաններ և ֆաբրիկաներ, որոնք տալիս են ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 60 տոկոսը: Երևանի արդյունաբերությունը թողարկում է բազմազան արտադրանք՝ էլեկտրական մեքենաներ, սարքեր, հաստոցներ և ավտոպահեստամասեր, ալյումին և սինթետիկ կաուչուկ, ժողովրդական սպառման առարկաներ:

Արդյունաբերական նոր շինարարությունը նպաստել է Երևանի տերիտորիայի նշանակալի ընդարձակմանը (1913 թվականի 332 հեկտարի դիմաց ներկայումս կազմում է 24 456 հեկտար): Դրան նպաստել է նաև Սովետական իշխանության տարիներին արտասահմանյան երկրներից եկած հայրենադարձների համար Երևանի շուրջը բնակելի նոր շրջանների ստեղծումը և հետագայում այդ ավանների քաղաքի շրջագծի մեջ մտցնելը (Արաբկիր, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Խարբերդ, Նոր Բութանիա, Զեյթուն, Կիլիկիա, Նոր Արեշ, Կիրզա և ուրիշները):

Երևանը վարչական առումով բաժանվում է քաղաքային հինգ շրջանների՝ 26 կոմիսարների անվան, Լենինյան, Սպանդարյան, Ստալինյան և Շահումյան:

Սոցիալիստական շինարարության տարիներին անճանաչելիորեն փոխվել է Երևան քաղաքի արտաքին տեսքը: Ստեղծվել են բարեկարգ փողոցներ և ընդարձակ հրապարակներ, որոնք զարդարված են գեղեցիկ ճարտարապետական անսամբլներով և հոյակապ կոթողներով, որտեղ օգտագործված են հայկական և սովետական ճարտարապետության լավագույն տրադիցիաները: Երևանի յուրօրինակ ճարտարապետությանը բնորոշ է բնական քարերի՝ բազմերանգ տուֆերի, տրախիտների, բազալտների և այլնի օգտագործումն ու ճարտար զուգակցումը: Այդ քարերից կառուցված բնակելի և արդյունաբերական շենքերը քաղաքին տալիս են ինքնատիպ գունագեղություն:

Սոցիալիստական Երևանի կառուցման առաջին հատակագծային կոմպոզիցիան, որի հիմքում դրվում է ուղղանկյուն շառավղաշրջանային փողոցների զուգորդման կառուցվածքը, կազմվել է 1924 թ. ակադեմիկոս Ալ. Թամանյանի կողմից: Քաղաքի արագ աճման հետ կապված հատակագծի հետագա բոլոր վերանայումների ժամանակ հիմնականում պահպանվել են Ալ.Թամանյանի մշակած քաղաքաշինական սկզբունքները:

Քաղաքի կենտրոնը Վ. Ի. Լենինի անվան էլիպսաձև հրապարակն է, որի շուրջը վեր են խոյանում Կառավարական տունը, Միությունների տունը, Վ. Ի. Լենինի հոյակապ հուշարձանը, „Արմենիա" հյուրանոցը, Ժողտնտխորհի և Պատմական թանգարանի շենքերը:

Ճարտարապետական գեղեցիկ անսամբլներ են իրենցից ներկայացնում նաև Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հրապարակը, կայարանամերձ հրապարակը՝ Սասունցի Դավթի արձանով, Ս.Սպանդարյանի անվան հրապարակը:

Քաղաքը հյուսիսից և արևելքից շրջափակող բարձունքների լանջերին ստեղծվել են անտառայգիներ, որոնք զգալիորեն մեղմացնում են քաղաքի միկրոկլիման և բարելավում սանիտարական պայմանները: Ներկայումս քաղաքի տերիտորիայի մոտ 10 տոկոսը կանաչապատ է:

Երևանը կուլտուրական խոշոր կենտրոն է: Այստեղ են գըտնվում Գիտությունների ակադեմիան, 58 գիտահետազոտական հիմնարկներ, 10 բարձրագույն և 18 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Քաղաքն ունի 129 հանրակրթական դպրոց, կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց: Թանգարաններից առավել նշանավոր են՝ Պատմական թանգարանը, Պատկերասրահը, Ռևոլյուցիայի և Երկրաբանական թանգարանները: Երևանում է գտնվում աշխարհահռչակ Մատենադարանը (Զեռագրատունը)՝ հայ ժողովրդի դարավոր մշակույթի հարուստ գանձարանը:

Սովետական մարդկանց հերոսական աշխատանքով Երևանը օրավուր էլ ավելի է փոխվում, գեղեցկանում ու վեհանում:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Հազար բնակչին ընկնող աշակերտների թիվը ըստ շրջանների (առանց ռեսպուբլիկական ենթակայության քաղաքների)

- 140–149
- 150–159
- 160–169
- 170–179
- 180–189
- 190 և ավելի

Միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտների թիվը

- մինչև 75
- 76–125
- 126–200
- 201–300
- 301–500
- 501–750
- 751–1250
- 1251–2000
- 9000-ից ավելի

Ծանոթություն: Շրջանակում նշված թվանշանը ցույց է տալիս միջնակարգ դպրոցների թիվը (2 և ավելի) տվյալ բնակավայրում

Հանրակրթական դպրոցների թիվը



Միջնակարգ դպրոցների տեսակարար կշիռը հանրակրթական դպրոցների ընդհանուր թվի մեջ (տոկոսներով)



Հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը (հազարներով)



Հանրակրթական դպրոցների աշակերտների բաշխումը ըստ դասարանների խմբերի (տոկոսներով)



Հանրակրթական դպրոցների ուսուցիչների թիվը (հազարներով)



Մասշտաբ 1:1 000 000

կմ 10 0 10 20 30 40 50 կմ


ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ուսումնական հաստատություններ
Համալսարան
Մանկավարժական
Տեխնիկական
Գյուղատնտեսական
Բժշկական
Կուլտուր-լուսավորական
Սոցիալ-տնտեսական
Ֆիզկուլտուրայի
10000
1600
900
400
100
Մեկ մմ շառավղով շրջանակի մակերեսը համապատասխանում է 100 սովորողի
Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները ըստ ուսուցման տիպերի
Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները ըստ ուսուցման տիպերի
(տոկոսներով)
60,6 Ցերեկային
16,7 Երեկոյան
22,7 Հեռակա
51,9 Ցերեկային
6,6 Երեկոյան
41,5 Հեռակա
Սովորողների թիվը միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում (հազարներով)
ուս. տարի
1914/15 0,1
1927/28 1,7
1940/41 8,9
1950/51 10,3
1958/59 14,0
Ուսանողների թիվը բարձրագույն ուսումնական հաստատություններում (հազարներով)
ուս. տարի
1914/15 0
1927/28 1,6
1940/41 11,1
1950/51 15,1
1958/59 19,6
ԵՐԵՎԱՆ
Ստեփանակերտ
Նախիջևան
ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Գիտական հիմնարկներ
Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Այլ գիտական հիմնարկներ
Թանգարաններ
Պատմա-ռևոլյուցիոն
Պատմական
Մեմորիալ
Գավառագիտական
Բնա-գիտական
Արվեստագիտական
Նշանների մոտ տրված է բնակավայրում եղած տվյալ օբյեկտների թիվը
Գիտական հիմնարկների քանակը
36
60
69
76
1940թ.
1950թ.
1958թ.
1959թ.
Ասպիրանտների թիվը գիտական հիմնարկներում
1940թ. 32
1950թ. 40
1955թ. 140
1958թ. 155
1959թ. 185
Գիտական աշխատողների թիվը
1940թ. 1067
1950թ. 2000
1955թ. 2516
1958թ. 3342
1959թ. 4085
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնող գրքերի քանակը ըստ շրջանների (առանց ռեսպուբլիկական ենթակայության քաղաքների)
2000-3000
3000-4000
4000-5000
5000-6000
6000-ից ավելի
Գրքերի քանակը մասսայական գրադարաններում (հազ. օրինակ)
մինչև 125
126–250
251–400
1300-ից ավելի
շրջաններում
ռեսպուբլիկական ենթակայության քաղաքներում
Քառակուսիների ներսում տրված է մասսայական գրադարանների թիվը
Մասսայական գրադարանների քանակը
13
908
1249
1913թ.
1940թ.
1958թ.
Մասսայական գրադարանների գրքային ֆոնդը (հազ. օրինակ)
9,0
711,0
2238,9
6660,1
1913թ.
1940թ.
1950թ.
1958թ.
Տպագիր արտադրանքը (տպաքանակը հազ. օրինակ)
Գրքեր
2819
4878
6446
7331
1940թ.
1950թ.
1954թ.
1958թ.
Հանդեսներ և թերթեր
50
458
813
1705
235
186
237
364
1940թ.
1950թ.
1954թ.
1958թ.
Հանդեսներ (տարեկան տպաքանակը)
Թերթեր (մի անգամվա տպաքանակը)
ԿԻՆՈՆԵՐ ԵՎ ԹԱՏՐՈՆՆԵՐ
Կինոսարքավորումների քանակը
6
26
168
374
404
462
1913
1927
1940
1950
1958
1959 թթ.
Կինոսարքավորումների բաշխումը ըստ տեսակների (տոկոսներով)
Շրջիկ
21,5
73,5
Ստացիոնար
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Յուրաքանչյուր 10 000 բնակչին ընկնող կինոսարքավորումների քանակը ըստ շրջանների
մինչև 2
2,1–3
3,1–4
4,1–5
5-ից ավելի
Թատրոններ
Կինո-թատրոններ ռեսպուբլիկական ենթակայության քաղաքներում
Նշանների մոտ տրված է բնակավայրում եղած տվյալ օբյեկտների թիվը
Մասշտաբ 1:2 000 000
կմ 20 0 20 40 60 80 100 կմ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Հազար բնակչին ընկնող հիվանդանոցային մահճակալների թիվը ըստ շրջանների (առանց ռեսպուբլիկական ենթակայության քաղաքների)

- մինչև 4
- 4,1–5
- 5-ից ավելի

Մահճակալների թիվը հիվանդանոցային հիմնարկներում

մինչև 10 · 11-25 · 26-50 · 51-100 · 101-300 · 301-1000 · 1001-2000 · 4000-ից ավելի

ՍԱՆԱՏՈՐԻԱՆԵՐ ԵՎ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐ

- Մեծահասակների սանատորիաներ
- Մանկական սանատորիաներ
- Հանգստյան տներ

Նրբագծերով ցույց է տրված ամբողջ տարին գործող մահճակալների տեսակարար կշիռը

Մահճակալների թիվը սանատորիաներում և հանգստյան տներում — 500 — 200 — 30

Մեկ մմ շառավղով շրջանակի մակերեսը համապատասխանում է 30 մահճակալի

ԴԻՍՊԱՆՍԵՐՆԵՐ

- Հակատուբերկուլոզային
- Ուռուցքաբանական
- Տրախոմային
- Մաշկա-վեներական
- Բժշկական ֆիզկուլտուրայի
- Պսիխոնեվրոլոգիական

Բժիշկների (ներառյալ ատամնաբույժների) և միջին բուժանձնակազմի թիվը

	Բժիշկներ	Միջին բուժանձնակազմ
1913 թ.	73	153
1928 թ.	335	535
1940 թ.	1020	2327
1950 թ.	2575	4556
1958 թ.	4167	9804
1959 թ.	4318	10739

Բնակչության 10 000 հոգուն ընկնող բժիշկների թիվը (առանց ատամնաբույժների)

1913	1928	1940	1950	1958	1959 թ.
0,6	2,7	6,8	17,2	22,0	21,8

Հիվանդանոցային մահճակալների թիվը

1913	1928	1940	1950	1958	1959 թ.
212	1196	4092	6467	11590	12245

Բուժհիմնարկների թիվը

- Ֆելդշերա-մանկաբարձական կետեր
- Հիվանդանոցային հիմնարկներ
- Կանանց և մանկական կոնսուլտացիաներ

	1913	1928	1940	1950	1958	1959 թ.
Ֆելդշերա-մանկաբարձական կետեր	13	30	96	240	348	479
Հիվանդանոցային հիմնարկներ	6	20	51	163	257	261
Կանանց և մանկական կոնսուլտացիաներ	0	10	113	146	183	508

Հիվանդանոցային մահճակալների բաշխումը ըստ նրանց մասնագիտացման (տոկոսներով)

- Թերապևտիկ — 18,2
- Հղի կանանց և ծննդկանների — 14,9
- Վիրաբուժական — 12,5
- Մանկական (ոչ-վարակիչ) — 11,8
- Վարակիչ — 7,5
- Հոգեբուժական — 8,6
- Տուբերկուլյոզային — 7,4
- Ընդհանուր — 8,8
- Այլ մասնագիտացման — 10,1

Մասշտաբ 1:1 000 000

կմ 10 0 10 20 30 40 50 կմ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ խոշոր արդյունաբերությունը, որը ստեղծվել է սոցիալիստական ինդուստրացման շնորհիվ, հիմնված է տեղական հանքային հումքի և էներգետիկ ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև գյուղատնտեսական բավմատեսակ հումքի վերամշակման վրա:

Սոցիալիստական շինարարության տարիներին առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ռեսպուբլիկայի հանքային հարստությունների ուսումնասիրությանը, որոնք հիմք հանդիսացան ծանր արդյունաբերության վարգացման համար: Զգալիորեն ավելացան գունավոր մետաղների հանքաքարի պաշարները, որոնց մի մասը պարունակում է հազվագյուտ ու ցրված էլեմենտներ: Հայտնաբերվեցին բավմաթիվ նոր օգտակար հանածոներ՝ մոլիբդենի հանքաքար, ևեֆելինային սիենիտներ, երկաթահանք, տրավերտին, տուֆ, պեմզա, մարմար և այլն, որոնք բոլորն էլ ունեն արդյունաբերական նշանակություն:

Հայկական ՍՍՌ ծանր արդյունաբերության, հատկապես նրա էլեկտրատար ճյուղերի՝ կալցիումի կարբիդի, սինթետիկ կաուչուկի, մետաղային ալյումինի, էլեկտրալիպային պղնձի, մոլիտի և ազոտային պարարտանյութերի արտադրության վարգացման գործում մեծ դեր խաղացին Սևան-Հրազդան սիստեմի էլեկտրակայանները:

Ինդուստրիալ վարգացման հետևանքով Հայկական ՍՍՌ մասնագիտացավ ծանր արդյունաբերության երեք առաջատար ճյուղերի գծով՝ գունավոր մետալուրգիայի, (պղնձի, ալյումինի ձուլում և մոլիբդենի կոնցենտրատի արտադրություն), քիմիական արդյունաբերության (կալցիումի կարբիդի, ացետիլենի, նրանից ստացվող նյութերի, ինչպես նաև պարարտանյութերի արտադրություն) և մեքենաշինության (էլեկտրատեխնիկական մեքենաշինություն, հաստոցաշինություն, սարքաշինություն):

Հայկական ՍՍՌ թեթև և սննդի արդյունաբերությունը վերամշակում է ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունից ստացվող հումքը: Առանձնապես աչքի է ընկնում գինու-կոնյակի և պտղաբանջարային պահածոների արդյունաբերությունը:

Հայկական ՍՍՌ արդյունաբերության վարգացման բնորոշ առանձնահատկություններից մեկը նրա բավմաճյուղ բնույթն է: Ժամանակակից խոշոր արդյունաբերությունը ներկայացված է տասնյակ նոր արտադրություններով, որոնք թողարկում են հարյուրավոր տեսակի ապրանքներ:

